ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԴԻՑԱՆՈՒՆԻՑ ՑԵՂԱՆՈՒՆ. ՄԻ ՀՆԱԳՈՅՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՄԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
alpehist@gmail.com

Հայոց ազգածին առասպելի համաձայն, Արարատեան Դաշտը առաջինը բնակեցնում է Հայկի որդի Արամանեակը (աւանդուած է նաեւ Արմանէակ, Արամենակ/Արմենակ տարբերակներով), իսկ նրա որդի Արամայիսը (տարբերակ՝ Արմայիս) այնտեղ կառուցում է հայոց առաջին մայրաքաղաքը եւ կոչում իր անունով՝ Արմաւիր: Միքանի սերունդ անց սրանց ժառանգներից Արամը ընդարձակում է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից եւ հիմք դնում նոր, հզօր Հայաստանի, նորից կենտրոն ունենալով Արմաւիրը[1]:

Արմաւիր անուանումն աւանդուած է յետուրարտական դարաշրջանից (յուն. Armaouira, լատ. Armavira, հին հայ. Արմաւիր, սեռ. Արմաւրայ), բայց այն կարող է հնագոյն ծագում ունենալ[2], քանի որ անբացատրելի է հայերէն եւ հարեւան ժամանակակից լեզուներով: Ըստ ամենահաւանական ստուգաբանութեան, այն կարող է կապուել խեթերէն հիմքերի հետ՝ arma- «լուսին, լուսնաստուած» + pir «տուն», կրօնական ոլորտում՝ «աստծու տուն, տաճար» (որտեղ -ւն հին միջձայնաւորային -**p**ի օրինաչափ զարգացումն է)[3]:

Մանրամասն քննութիւնը ցոյց է տալիս, որ Ար(ա)մայիսը, ամենայն հաւանականութեամբ, եղել է լուսնի աստուածութիւն[4]: Ընդ որում, Արմայիս ձեւը նոյնական է լիկիական, յունական գրչութեամբ աւանդուած, Armais անուանը, որը նոյնպէս յանգեցնում է խեթալուվիական Armas «լուսին, լուսնաստուած» անուանը[5] (վերջին **s**ն ուղղական հոլովի վերջաւորութիւնն է): Նշենք, որ Արմաւիրի անուանադրի (eponym) անուան առաջին մասը եւս պէտք է լինէր Արմ- եւ ոչ Արամ- (Արամանեակի եւ Արամայիսի ձեւերի երկրորդ **ա**ն, հաւանաբար, ազգածին աւանդութեան առանցքային հերոսներ Արամի եւ Արայի անունների ազդեցութեան արդիւնք են, իսկ յունատիպ -իս վերջաւորութիւնը, հնարաւոր է՝ արհեստական, կամ լիկիական Արմահսի մի զուգահեռը լինել, յայտնի Խորենացուն կամ նրա յունական սկզբնաղբիւրին): Այս ստուգաբանութեան օգտին կարելի է աւելացնել, որ հին հայկական աւանդութեան մէջ լուսնի պաշտամունքը յիշւում է միայն մէկ անգամ, Արմաւիրում (Խորենացի Բ. ը, ժբ.): Վաղարշակ արքան այստեղ արեւին, լուսնին եւ իր նախնիներին նուիրուած տաճար է կառուցում, որի՝ արեւի ու լուսնի արձանները յետագա-

յում փոխարինւում են իրենց յունական համապատասխանութիւնների՝ Տիր-Ապոլոնի եւ Անահիտ-Արտեմիսի հելլենիստական արձաններով[6]:

Չի կարելի պնդել, որ arma- «լուսին» եզրը ծագումով բնիկ անատոլիական-փոքրասիական՝ խեթալուվիական է: Այն չունի հնդեւրոպական զուգահեռներ եւ, ամենայն հաւանականութեամբ, տեղական, ենթաշերտային ծագում ունի[7]: Ակնյայտօրէն ոչ-հնդեւրոպական է նաեւ խեթ. per/pir «տուն» բառը, եգիպտական pr եւ խուռիական pur(l)i նոյնիմաստ զուգահեռներով[8]: Այսպիսով, չնայած Արմաւիրի խեթական ծագման հնարաւորութեանը, հաւանական է նրա նաեւ այլ ծագումը (անուան երկու բաղադրիչներն էլ հնդեւրոպական չեն):

Ըստ Խորենացու, այլ ազգերը սկսում են հայերին կոչել արմէն եւ նման անուանումներով՝ Արամ նահապետի անունից, իսկ Սեբէոսի գրքում որպէս այդ ցեղանուան անուանադիր է հանդէս գալիս Ար(ա)մանեակը[9]: Ար(ա)մանեակը, Ար(ա)մայիսը եւ Արամը հայոց ազգածին առասպելի առանցքային կերպարներից են: Նրանք, հենց առասպելի եզրաբանութեամբ, «ազգածին» նահապետեր են, եւ նրանց անունների ար(ա)մ տարրն ակնարկում է, ակնյայտօրէն, արմէն ցեղանունը: Ի միջի այլոց, Արամի հօր անունն է Հարմա. այսպիսով, այդ անուանաբանական տարրը առասպելում կրում են չորս նահապետեր, բոլոր դիցաբանական նահապետերի կէսը (միւսներն են Հայկը, Ամասիան, Գեղամը եւ Արան): Ըստ այդմ, արմէն ցեղանունը կարող է կապուել նաեւ Արամայիսի, եւ այդպիսով, նաեւ Arma- դիցանուան հետ[10]: Կարելի է ենթադրել նաեւ, որ Արամը, հայոց անուանադիրն ըստ Խորենացու, նոյնպէս սկզբնապէս կապուած է եղել այս դիցանուան հետ եւ միայն յետագայում է ձեւափոխուել՝ խառնուելով Ուրարտուի առաջին արքայ Արամուի եւ *Աստուածաշունչ*ում արամէացիների անուանադիր Արամի անունների հետ[11]: Այս մեկնաբանութիւնը հաւանական է նաեւ լեզուաբանական տեսակէտից՝ արամ- եւ արմ- տարրերի ստուգաբանական կապը հայերէնում դժուար ապացուցելի է:

Արմէն ցեղանունը, ըստ լայնօրէն ընդունուած ստուգաբանութեան, ծագում է Սասունի լեռներում, Մուշից հարաւ գտնուող հնագոյն Arme երկրանունից, ուրարտական ածանցով՝ Arme-ni «Արմէ (երկրի) բնակիչ», նաեւ՝ «արմէական (երկիր)»[12]:

Ըստ ասորեստանեան աղբիւրների, Հայկական Լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան շրջանները Ք.ա. ԺԲ. դարում նուաճուել են մուշկերի, ուրումացիների եւ կաշկացիների (կոչւում են նաեւ աբեշլացիներ) ցեղերի կողմից (mušku, urumaia, kaškaia/abešlaia)[13]: Ասորեստանեան աւելի ուշ աղբիւրներում մուշկեր են կոչւում նաեւ փռիւգացիները եւ, այդ պատճառով, այս վաղ մուշկերին գիտութեան մէջ ընդունուած է կոչել «արեւելեան մուշկեր» (այդ երկուսի նոյնականութիւնը տեսականօրէն հնարաւոր է,

բայց վիճելի): Ուրումացիները եւ կաշկացի/աբեշլացիները յիշւում են որպէս «խեթական երկրի» ըմբոստ մարդիկ, որոնք «ուժով գրաւել են Շուբարտու երկրի բնակավայրերը» (Շուբարտուն նոյն Շուբրիա երկիրն է Սասունի լեռներում եւ Մուշի դաշտում):

Մուշկերի ցեղանուան հետ է կապուած, հաւանաբար, Մուշ քաղաքի անուանումը (*musk^{h}o-/ mōsk^{h}o>Մուշ, սեռ. Մշոյ)[14], ուրումացիների հետ՝ «Ներքին Ուրումու» եւ Ուրմէ երկրները (նոյնպէս Մուշի շրջանում), իսկ Արմէ երկիրը, ինչպէս ասուեց, գտնուել է Մուշից հարաւ (Ուրմէի հարեւանութեամբ, աւելի հարաւ-արեւելք): Այդ բոլոր երկրները մտնում էին Շուբրիայի կազմի մէջ[15]: Կաշկացիները կամ կաշկերը, ուրումացիների դաշնակիցները, մի ցեղախումբ էին Խեթական Կայսրութեան հիւսիս-արեւելքում (յետագայ Պոնտոսում, Հայկական Լեռնաշխարհից հիւսիս-արեւմուտք): Նրանց լեզուական պատկանելութեան մասին, նիւթի պակասութեան պատճառով, դժուար է միարժէք կարծիք յայտնել (նրանք յաճախ համարուել են ազգակից խաթերին՝ Փոքր Ասիայի ոչ-հնդեւրոպական հին բնակիչներին, ապա՝ ժամանակակից աբխազա-ադըղական ժողովուրդներին, իսկ մի կարծիքի համաձայն՝ արեւմտաքարթուելական մի ցեղ էին): Կաշկերի եւ աբեշլացիների ցեղանունները պահպանուած են համարւում ժամանակակից հիւսիսարեւմտակովկասեան որոշ ցեղանուններում (հմմտ. հին հայ. Գաշք, հին վրաց. Kašag/k-, բիւզանդ. յուն. Kasachia, հին ռուս. Kosog «չերքէզ», հին յուն. Apsilai, լատ. Absilae, հին հայ. Ափշիլք, հին վրաց. Apšileti, աբխազ. a-apswa, a-apšwa «աբխազ»[16]:

Kaška ցեղանունը, հաւանաբար, կապուած է խաթական լուսնաստծու՝ Kaškuի հետ[17]: Դա, թերեւս, բոլոր կաշկական ցեղերի խաթական հաւաքական անուանումն է (իսկ աբեշլան, հնարաւոր է, ինքնանուանում է, կամ նրանցից մէկի անուանումը)[18]: Այդ ցեղանունը կարող է վկայել կաշկերի մօտ լուսնի առանձնայատուկ պաշտամունքի գոյութիւնը: Հելլենիստական դարաշրջանի Պոնտոսում լուսնի աստուած Մէնը նոյնացուել էր Զեւսի հետ եւ պաշտւում էր որպէս գերագոյն աստուած[19]: Հազարամեակներ տեւող լուսնի այս պաշտամունքը եւս կարող է փաստարկ հանդիսանալ կաշկա ցեղանուան «լուսնային» ստուգաբանութեան համար[20]:

Նոյնիսկ առանց այս դատողութիւնների էլ կարելի է ասել, որ Արմէ երկրանուան եւ փոքրասիական լուսնաստծու arma անուան կապի գաղափարը միանգամայն ընդունելի է: Միւս կողմից, Արմէ, Արմէն, Ար(ա)մանեակ, Ար(ա)մայիս եւ Արմաւիր անունները, դժուար է առանձնացնել Ք.ա. Գ.-Ա. հազարամեակների սեպագիր աղբիւրներում վկայուած բազմաթիւ համահունչ անուանումներից (Arman, Armanum, Armi, Armuna եւն.)[21]: Տեսականօրէն չի կարելի բացառել, որ սրանց գոնէ

մի մասը յանգում է տեղական «լուսին, լուսնաստուած» նշանակութեամբ արմատին, որը փոխառուել էր փոքրասիական եւ, թերեւս, նաեւ այլ հին տեղական լեզուներ:

Պէտք է նշել, որ լուսնի առանձնայատուկ պաշտամունքը բնորոշ է եղել ողջ տարածաշրջանին: Հին վրացական ցեղերի մէջ, ինչպէս Պոնտոսում, գերագոյնն էր լուսնի աստուածը[22], Աղուանքում ամենամեծ պաշտամունքն ունէր լուսնի դիցուհին, վկայուած յունական Սելենէ անունով[23], իսկ Հայաստանում՝ Անահիտը[24], որը նաեւ լուսնի դիցուհու յատկանիշներ ունէր: Ընդ որում, Հայաստանում, Վրաստանում եւ Աղուանքում ի յայտ է գալիս լուսնաստծու՝ դիցարանի մեծ աստուածների եռեակի անդամ լինելը (ուր գերագոյն աստուածը շրջապատուած էր արեւի եւ լուսնի աստուածներով): Կաշկերը, վրացիները, հայերը եւ աղուանները լեզուական առումով, գոնէ հիմնականում, ոչ-ազգակից ժողովուրդներ են: Ըստ այդմ, լուսնի այս առանձնայատուկ պաշտամունքը, որպէս մեծ աստուած եւ մեծ աստուածների եռեակի անդամ, ունի տեղական, տարածաշրջանային արմատներ:

Այսպիսով, հայերին օտարների կողմից տրուող արմէն ցեղանուան համար առաջարկւում է նոր ստուգաբանութիւն arma «լուսին, լուսնաստուած» նշանակութեամբ մի հին տեղական արմատից: Դիցակիր՝ դիցաբանական անուններով ցեղանունները յայտնի են ամէնուրեք: Մեր քննարկած նիւթի համար լաւագոյն օրինակը Հայաստանի հարեւան հնագոյն կաշկա ժողովրդի ցեղանունն է (տրուած նոյնպէս օտարների կողմից):

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Խորենացի, Ա. ժ-ժդ, Սեբէոս, Ա.:

[2] Հնագիտական տուեալների համաձայն, Արմաւիրի բլուրը պաշտամունքային կենտրոն է եղել արդէն Ք.ա. Դ. հազարամեակի վերջից: Ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջաններում, Ք.ա. Բ. հազարամեակի կէսից, նրա պաշտամունքային նշանակութիւնը մեծանում է, իսկ Արարատեան դաշտի ուրարտական նուաճումից առաջ (Ք.ա. Թ. դարի վերջ) այն արդէն տարածաշրջանի գլխաւոր կրօնական կենտրոններից մէկն էր: Ուրարտական դարաշրջանում (Ք.ա. Ը.-Է. դդ.) Արմաւիրի բլուրը, իր բազմաթիւ տաճարային եւ այլ պաշտամունքային ու աշխարհիկ կառոյցներով, Արգիշթի Ա.ի կողմից Ք.ա. 776ին կառուցած Արգիշթիխինիլի քաղաքի արեւելեան հատուածի կամ արուարձանի՝ «սրբազան քաղաք»ի կենտրոնն էր: Ուրարտուի անկումից յետոյ Արմաւիրը, մինչեւ Ք.ա. Գ. դար Հայաստանի մայրաքաղաքն էր (Արմաւիրի հնագիտական պատմութեան վերաբերեալ տե՛ս՝ A. Martirossian, *Argishtikhinili*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1974. նաեւ՝ G. Tiratsyan, “Armawir” *Revue des Études Arméniennes*, T. 27, 1998-2000. նաեւ՝ A. Karapetian, J. Khachatrian, A. Kanetsian, “Urartskii Armavir” (Ուրարտական Արմաւիր), *Istoriko-Filologicheskii Jurnal* 2, 2004, էջ 254-275. նաեւ՝ I. Karapetyan, “The “Susi” Temple of Argištihinili-Armavir”, *Aramazd: Armenian*

Journal of Near Eastern Studies, Vol., 2, 2011, էջ 37-43. նաեւ՝ Ա. Պետրոսեան, Ն. Տիրացեան, «Արմաւիրը Պաշտամունքային Կենտրոն», *Պատմաբանասիրական Հանդէս,* 1, 2012, էջ 169-184):

[3] Ա. Պետրոսեան, «Խեթերէնի Հետքեր Հայկական Լեռնաշխարհի Արեւելքում Եւ Հարաւ-Արեւելքում». *Խալդեան Զօրութեամբ… Յոդուածների Ժողովածու Նուիրուած Բորիս Պիոտրովսկու Ծննդեան 100-Ամեակին*, Երեւան, Գիտութիւն Հրատ., 2010, էջ 72-73. հմմտ.՝ G. A. Kapantsian, *Istoriko Lingvisticheskie Raboty* (Պատմա-լեզուաբանական աշխատանքներ), *Vol. II*, Երեւան, 1975, էջ 49-50: Անուան երկրորդ մասի ստուգաբանութեան համար հմմտ.՝ Խորենացու (Ա. ժբ) եւ Սեբէոսի (Ա.) վկայութիւնը Արմաւիրի՝ որպէս «տուն բնակութեան» կառուցելու վերաբերեալ: Ընդհանրապէս, հայերէնի անատոլիական փոխառութիւնները հիմնակայում լուվիական են համարւում, բայց լուվիերէնում այս արմատը հանդէս է գալիս այլ ձեւով՝ parna- (այս ձեւը հանդիպում է նաեւ խեթերէնում), եւ Արմաւիրը, այսպիսով, չի կարող լուվիական անուանում լինել:

[4] Պետրոսեան, «Խեթերէնի», էջ 65-77. նաեւ՝ Պետրոսեան, Տիրացեան. նաեւ՝ A.Y. Petrosyan, "First Capitals of Armenia and Georgia: Armawir and Armazi (Problems of Early Ethnic Associations)", *Journal of Indo-European Studies 40*, 3-4, 2012, էջ 265-288:

[5] P. Howink ten Cate, *The Luwian Population Groups of Lycia and Cilicia Aspera During the Hellenistic Period*, Leiden, Brill, 1961, էջ 132:

[6] Ա. Պետրոսեան, «Արմաւիր Եւ Արմազի. Հայ-Վրացական Հնագոյն Առնչութիւններ», *Գիտաժողովի Նիւթեր Նուիրուած Մովսէս Խորենացու Ծննդեան 1600-Ամեակին*, Վանաձոր, 2011, էջ 67-94. նաեւ՝ Պետրոսեան, Տիրացեան. նաեւ՝ Petrosyan, "First Capitals": Արմաւիրի եւ Վրաստանի առաջին մայրաքաղաք Արմազիի հիմնադրութեան եւ վաղ պատմութեան առասպելները չափազանց նման են. Արմազիում եւս յայտնի էր լուսնաստծու առանձնայատուկ պաշտամունքը (եռամաս տաճարային համալիրում, ամպրոպի եւ արեւի աստուածների հետ, ինչպէս Արմաւիրում): Յատկանշական է, որ Արմազին նոյնպէս, ըստ լայնօրէն տարածուած ստուգաբանութեան, կապուած է անատոլիական «լուսին» արմատի հետ (A.I. Boltunova, "K Voprosu Ob Armazi" (Արմազիի հարցի մասին), *Vestnik Drevney Istorii* 2, 1949, էջ 228-240. նաեւ՝ G. A. Melikishvili, *Nairy-Urartu*, Tbilisi, Akademia Nauk Gruz. SSR, 1954, էջ 420. նաեւ՝ G. A. Melikishvili, *K Istorii Drevney Gruzii* (Հին Վրաստանի պատմութեան մասին), Tbilisi, Akademia Nauk Gruz. SSR, 1959, էջ 229. նաեւ՝ G. A. Melikishvili, O. D. Lordkipanidze. *Ocherki Istorii Gruzii* (Ակնարկներ՝ Վրաստանի պատմութեան), *Vol. I,* Tbilisi, Metsniereba, 1989, էջ 394-395):

[7] Այսպէս, Թիշլէրը, յիշելով բառի հնդեւրոպական մեկնաբանութեան տարբեր փորձերը, թողնում է այն առանց ստուգաբանութեան (J. Tischler, *Hetitisches Etymologisches Glossar, Teil I,* Innsbruck, Institut für Sprachwissenschaft der Universität Innsbruck, 1983, էջ 62. հմմտ.՝ T.V. Gamkrelidze, V.V. Ivanov, *Indoevropeyskii Yazik I Indoevropeytsi* (Հնդեւրոպական լեզուն եւ հնդեւրոպացիք), Tbilisi, Metsniereba, 1984, էջ 685. նաեւ՝ Puhvel, *Hittite Etymological Dictionary: Trends in Linguistics. Vol. I*, Berlin-New York, de Gruyter 1984, 154 յաջ.):

[8] Tischler, էջ 569 յաջ.:

[9] Գ. Խ. Սարգսեան, «Յատուկ Անունների Ստուգաբանութիւնը Մովսէս Խորենացու Պատմութեան Մէջ», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1-2, 1998, էջ 113-128, էջ 123:

[10] Ար(ա)մանեակ/Արմենակը կարող էր ձեւաւորուել արմէն ցեղանուան հիման վրայ (նուազական -ակ ածանցով): Սակայն այն, ամենայն հաւանականութեամբ, մի քանի ձեւերի բաղարկութեան արդիւնք է (A. E. Petrossian, "O Proiskhojdenii Armyanskogo Naroda: Problema Identifikatsii Protoarmyan (Kriticheskii Obzor)" (Հայ ժողովրդի ծագման վերաբերեալ. Վաղնջահայերի նոյնացման խնդիրը. քննական տեսութիւն), *Armyanskii Vestnik*, 2/3-1, 2009, էջ 98ծան.125): Տեսականօրէն հնարաւոր է նրա համար եւս անատոլիական ակունքներ գտնել, հմմտ. խեթ. armanni- «կիսալուսին», կամ անատոլիական՝ վաղնջական լուվիական Arma-nani «լուսնի (աստծու) եղբայր» անձնանունը (Արմանեակը վերակազմութեան մէջ Արմայիսի երկուորեակ եղբայրն է. Արմանանիակ>Արմանեակ, սղման արդիւնքում (Petrosyan, "First Capitals", էջ 277ծան.18): Այդ անձնանուան վերաբերեալ տե՛ս՝ E. Laroche, *Les Noms des Hittites*, Paris, 1966, էջ 39): Կան նոյն հիմքով կազմուած նաեւ ուշ փոքրասիական անուններ:

[11] Արմէն ցեղանուան՝ այդ անունների հետ բաղարկման վերաբերեալ տե՛ս՝ J. Markwart, "Le Berceau des Arméniens", *Revue des Etudes Arméniennes* 8, f. 2, 1928, էջ 215, 224:

[12] I.M. Diakonov, *Predistoria Armyanskogo Naroda* (Հայ ժողովրդի նախապատմութիւն), Երեւան, ԳԱ Հրատ., 1968, էջ 234 յաջ. ծան. 114: Ցեղանուան այլ մեկնաբանութիւններ տե՛ս՝ Գէորգ Ջահուկեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն. Նախագրային Ժամանակաշրջան*, Երեւան, ԳԱ Հրատ., 1987, էջ 285 յաջ. նաեւ՝ I.M. Diakonov, "O Samonazvanii Armyanskogo Naroda" (Հայ ժողովրդի ինքնանուան մասին), *Istoriko-Filologicheskii Jurnal*, 2, 2005, էջ 277-278. նաեւ՝ Petrossian, "O Proiskhojdenii", էջ 74 յաջ., գրականութեամբ:

[13] A. K. Grayson, *Assyrian Royal Inscriptions, Vol. II, part 2*, Վիսպատէն, 1976, էջ 12, 18, 66, 67, 92, 93: Այս ցեղերի վերաբերեալ տե՛ս, օրինակ՝ Diakonov, *Predistoria,* էջ 12, 123 յաջ., 214 յաջ. նաեւ՝ G. G. Giorgadze, "Neindoevropiskie Etnicheskie Gruppy (Khatty, Kaski) V Drevney Anatolii Po Khettskim Klinopisnym Tekstam," (Հին Անատիոլիայի ոչ-հնդեւրոպական էթնիկական խմբերն ըստ խեթական սեպագիր բնագրերի. խաթեր, կաշկեր) *Rozyskaniya Po Istorii Abkhazii/Gruziia*, Tbilisi 1999, http://forum.gol.ge/index.php?showtopic=22904&st=560:

[14] A. Y. Petrosyan, "The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic", *Journal of Indo-European Studies Monograph No 42*, Washington DC, Institute for the Study of Man, 2002, էջ 142: Այս տեղանուան կապը սեպագիր muškի հետ, պարզ համահնչիւնութեան հիմքի վրայ, առաջարկուել է վաղուց (Diakonov, *Predistoria,* էջ 222 յաջ. նաեւ՝ I. M. Diakonoff, "First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia", *Annual of Armenian Linguistics*, 13, 1992, էջ 51-54. նաեւ՝ Գէորգ Ջահուկեան, *Հայերէնը Եւ Հին Հնդեւրոպական Լեզուները*, Երեւան, ԳԱ Հրատ., 1970, էջ 78):

[15] Աղբիւրների եւ երկրների տեղայնացման վերաբերեալ տե՛ս՝ N. V. Arutyunian, *Toponimika Urartu* (Ուրարտուի անուանաբանութիւնը), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 39, 210յաջ.

[16] Melikishvili, *Nairy-Urartu*, էջ 76. նաեւ՝ Melikishvili, *K Istorii Drevney*, էջ 98. նաեւ՝ Diakonov, *Predistoria,* էջ 12ծան. 7:

[17] G.G. Giorgadze, "K Voprosu O Lokalizatsii I Yazikovoy Strukture Kaskkikh Etnicheskikh I Geograficheskikh Nazvanii" (Կաշկական էթնիկական եւ աշխարհագրական անուանումների տեղայնացման եւ լեզուական կառուցուածքի շուրջ), *Peredneaziatskii Sbornik*, I, Մոսկուա, 1961, էջ 199 յաջ.:

[18] Կաշկերի վերաբերեալ տե՛ս՝ Melikishvili, *Nairy-Urartu*, էջ 73, 410. նաեւ՝ Giorgadze, "K Voprosu O". նաեւ՝ Giorgadze, "Neindoevropeiskie". նաեւ՝ E. von Schuler, *Die Kaškäer*, Berlin, de Gruyter, 1965. նաեւ՝ I. Singer, "Who were the Kaška?", *Phasis 10 (II). The Argonautica and World Culture. Greek and Roman Studies,* 2007, էջ 166-181:

[19] S. Saprykin, *The Religion and Cults of the Pontic Kingdom: Political Aspects. Mithridates VI and the Pontic Kingdom*, Aarhus, Aarhus University Press, 2009, էջ 258յաջ.:

[20] Այդ մասին տե՛ս նաեւ՝ Giorgadze, "K Voprosu O", էջ 200: Լուսաստծու առանձնայատուկ պաշտամունքը յիշեցնում է հին արաբական իրականութիւնը, ուր տարբեր ցեղեր, որպէս գերագոյն աստուած, տարբեր անուններով պաշտում էին լուսնաստծուն:

[21] Տե՛ս օրինակ՝ *Répertoire Géographique des Textes Cuneiformes*, I, 18; II, 15; III, 21; V, 38; XII, 50 ff. նաեւ՝ Arutyunian, էջ 37 յաջ. նաեւ՝ Petrosyan, "The Indo-European and Ancient Near Eastern", էջ 163:

[22] Տե՛ս օրինակ՝ A. I. Boltunova. "K Voprosu Ob Armazi".

[23] Strabo, *Geography* XI.4.7: http://rbedrosian.com/Classic/strabo11.htm.

[24] Նոյն, XI.14.16:

FROM THEONYM TO ETHNONYM: TRACES OF AN ACIENT CULT IN ARMENIA (SUMMARY)

ARMEN PETROSYAN
alpehist@gmail.com

Armenians call themselves "*Hay*s", while non-Armenians call them "Armenians".

The author of the article tackles the issue of calling the Armenians "Armen"s through a new approach.

He speculates that the word Armen could have a meaning rather than be considerd the name of an ethnic group or its leader.

While he notes that the cult of the moon in Armenia is attested to only once, in Armawir, the oldest capital of Armenia (in a triadic temple along with the royal ancestors and the god of sun), he argues that the name of Armawir can be derived from the Anatolian term for the moon: Arma-pir 'house (temple) of moon (god)' (in Hittite). Furthermore, he notes that the name of the Armenian patriarchal figure, Ar(a)mayis, legendary founder of Armawir, coincides with the Lycian personal name Armais (arma- 'moon, moon god'). Moreover, he underlines the fact that four (out of the eight) names of the Armenian mythological ethnongonic patriarchs – Ar(a)maneak, Ar(a)mayis, Harma, Aram – contain the element ar(a)m-, which is to be associated with the ethnonym (exonym) Armen. Accordingly, he concludes that such an interpretation should be taken into consideration as well, while trying to answer the question of the very naming of Armenians.